

Կիպրոսի Նախագահը Ընդունեց ՀՅԴ Բիւրոյի
Ընդկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը

Յունիս 13-ին, Կիպրոսի նախագահական պալատին մէջ, Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նիքոս Անասթասիատիս ընդունեց չՅ Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի գլխաւորած պատուիրակուիթիւնը, որ կը բաղկանար Հայ Համայնքի պետական ներկայացուցիչ Վարդէս Մահտեսեանէ, չՅ Կիպրոսի կոմիտէի ներկայացուցիչ Սիմոն Այնէճեանէ եւ կոմիտէի անդամներ Վահան Այնէճեանէ եւ ԿաՓՔի Մահտեսեանէ: Ներկայ էր նաեւ իրաւաւորական բանբեր Պրոտորմոս Պրոտորմու:



Նախագահ Անասիթասիատիս, ողջունելով ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչին ներկայութիւնը Կիպրոսի մէջ, վստահեցուց, որ կիպրական կառավարութիւնը զօրավիգ կը կանգնի Հայաստանի Հանրապետութեան եւ հայ ժողովուրդին, Հայաստանի եւ սփիւռքի տարածքին, եւ վստահեցուց, որ միջազգային հաստատութիւններու մէջ, Եւլայ ան ՄԱԿ-ի կամ Եւրոպական Միութեան, Կիպրոս մեծ ջանք կը թափէ օգտակար հանդիսանալու Հայաստանի Հանրապետութեան շահերուն եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի դատին: Հանրապետութեան նախագահը վստահեցուց Յակոբ Տէր Խաչատուրեանին, որ Կիպրոս եւրոպական Միութեան մէջ արդէն իսկ յառաջ կը քշէ Հայաստանի Հանրապետութեան հետ առնչուող հարցեր: Նախագահ Անասիթասիատիս յիշեցուց, որ իր յարաբերութիւնները պետական ներկայացուցիչին հետ եղած են միշտ սաւունք եւ միշտ զրական կերպով անդրադարձած է պետական ներկայացուցիչի խնդրանքներուն:

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան նախ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց կիպրական կառավարութեան՝ կիպրահայ համայնքին հանդէպ իր ցուցաբերած հոգատար վերաբերմունքին համար եւ վստահեցուց նախագահ Անասիասիատիսին, որ ՀՅ Դաշնակցութիւնը, իր աշխարհասփիւռ կազմակերպական կառույցով Կիպրոսի կառավարութեան տրամադրութեան տակ կը գտնուի՝ յառաջ քշելու կիպրական դատը եւ օգտակար հանդիսանալու կիպրական հարցի լուծման ջանքերուն: Ան աւելցուց, որ պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանին միջոցով վերջին տարիներուն տարուած է հսկայական աշխատանք, ամրապնդուած է կիպրական կառավարութեան եւ կիպրահայ համայնքի միջեւ գոյութիւն ունեցող կապը:

**ՀՅԴ Գանատայի շրջանի «Լոռի-Զաւախք»
յանձնախումբի ջանքերով անցնող երկամեակին աւելի
քան 100 հազար տոլար հանգանակուած է ի նպաստ
Լոռիի եւ Զաւախքի օժանդակութեան ծրագիրներուն**



Կարգավ Էջ 5

Գանատայի մօտ ՀՀ դեսպան
Անահիտ Յարութիւնեան հիւրընկալեց
հայ համայնքի ներկայացուցիչները



Յունիս 14-ին, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիկ. Անահիտ Յարուխունյան Օթթաուայի մէջ ընդունեց Գանատայի Հայ Համայնքի կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները:

Դեսպանատան մէջ կայացած ընդունելութեան ընթացքին հիւպատոս Արա Մկրտչեանի բարի գալուստի խօսքէն ետք տիկին ղեսպանը շնորհակալութիւն յայտնեց Գանատայի հայութեան եւ իր ուղերձին մէջ ըսաւ. «Պէտք միշտ եղել էք ղեսպանութեան կողքին, ղեսպանատան կազմաւորման առաջին իսկ օրից: Ես իմ կողմից վստահեցնում եմ, որ այդ համագործակցութիւնը կը շարունակուի: Կրկնակի մեծ պարտաւորութիւններ ունեմ որպէս առաջին կին ղեսպան Գանատայում եւ յոսով եմ, որ պատուով կը կատարեմ իմ առջեւ դրուած առաքելութիւնը: Ես ձեզ իւրաքանչիւրիդ համարում եմ ղեսպանութեան մի փոքրիկ օղակը»:

Ընդունելութեան ընթացքին տիկին ղեկավարն ծանօթացաւ գանատաւայ կադ-
մակերպութիւններու ներկայացուցիչներուն:

ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տօնապետեան եւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Վաչէ Շամբեան դեպպանին հետ առանձնազրոյցի ընթացքին յայտնեցին, որ դեպպանատան հիմնադրութեանն ի վեր Գանատայի Հայ Դատի յանձնախումբը սերտօրէն համագործակցած է դեպպանատան հետ եւ խոստացան յառջիկային յատուկ հանդիպման մը ընթացքին իրազեկ պահել դեպպանին գանատական քաղաքական գետնի վրայ Հայ Դատի յանձնախումբի ծաւալած քաղաքական բազմաչերտ գործունէութեան մասին:

Ընդունելութեան ներկայ էին ՀՅԴ Բիւրոյի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի, ՀՅԴ Մոնթրէալի, Լաւալի, Օթթաւայի եւ Գէմպրիծի կոմիտէներու ներկայացուցիչները, Օթթաւայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչը, Համազգայինի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչը, ՀՕՄ-ի, ՀՄԸՄ-ի եւ Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեանց ներկայացուցիչները, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութիւնը, ՀՕՄ-ի Լաւալի, Մոնթրէալի եւ Օթթաւայի ներկայացուցիչները, ՀԲԸՄ-ի պատուիրակութիւնը եւ Համայնքի անհատ ներկայացուցիչներ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**ՀՅԴ Երիտասարդական միություններու հայրենի
ճամբարները նպատակաուղղուած առաքելութիւն են**



Կարդալ էջ 3

[illegible]



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



Ազգային Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդին «Հաւատք՝ գործելով» համագումարը նոր թափ ու եռանդ պարգեւեց մասնակիցներուն



Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդին, Ուրբաթ, 7 Յունիս 2019-ին, Քինկսթընի մէջ տեղի ունեցաւ առաւ աւանդութեան վերածուած երիտասարդական համախմբումը, որ ունէր «Հաւատք՝ գործելով» նշանաբանը: Երկօրեայ համախմբումին, Շաբաթ, 8 եւ Կիրակի, 9 Յունիս 2019-ին, մասնակցեցեան աւելի քան 40 երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնք եկած էին թեմիս զանազան շրջաններէն:

Սոյն համախմբումին Առաջնորդ Սրբազան Հօր կողքին ներկայ էին թեմիս առաջնորդական փոխանորդ Գերապատիւ Տ. Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեանը, Արժանապատիւ Տ. Տաթեւ Ա. Քահանայ Միջայեյեանն ու Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանէն ժամանած Արժանապատիւ տոքթ. Տ. Վահան Քահանայ Գույումճեանը:

Համախմբումը զեղուէն էր քրիստոնէական, եկեղեցագիտական, դաստիարակչական, Ս. Գրային եւ ընկերային դասախօսութիւններով, հանդիպումներով ու հաւաքներով, նպատակ ունենալով անդրադառնալ եկեղեցւոյ կեանքէն ներս երիտասարդութեան կարեւոր դերակատարութեան:

Երկօրեայ համախմբումը կ'ընդգրկէր այժմէական երեք նիւթերու շուրջ զրոյց-ներկայացումներ: Առաջին նիւթն էր «Ներածութիւն Աստուածաշունչի», զոր ներկայացուց Գերապատիւ Տ. Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեան, երկրորդ նիւթը՝ «Ընտանիք եւ ամուսնական կեանքը՝ ըստ Աստուածաշունչի», զոր ներկայացուց Արժանապատիւ տոքթ. Տ. Վահան Քահանայ Գույումճեան, իսկ երրորդը՝ «Իսլամացած հայեր», զոր ներկայացուց «Հորիզոն» շաբաթաթի գլխաւոր խմբագիր տիար Վահագն Գարագաշեան: Իսկ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդէն Բարեշնորհ Սարգիս Սրկ. Կիտանեան ներկայացուց «Հայ եկեղեցւոյ շարականները եւ Ս. Պատարագը»: Գործադրուեցաւ կլոր սեղան մը «Իսլամացած հայեր» նիւթին շուրջ, ինչպէս նաեւ ցուցադրուեցաւ «Արարատէն Սիոն» ֆիլմը:

Ընկերային գուարթ պահերու, երգի, երաժշտութեան, խարոյկահանդէսի եւ խաղերու կողքին, համախմբումը յազեցած էր ժամերգութիւններով եւ Ս. Պատարագով: Աւարտին տեղի ունեցաւ համագումարի արժեւորում, ուր շեշտուեցաւ երիտասարդութեան կարեւոր դերն ու մասնակցութիւնը եկեղեցւոյ ծառայական կեանքին մէջ:

Կիրակի, 9 Յունիսի յետմիջօրէին, երիտասարդները վերադարձան իրենց շրջանները, նոր թափով ու եռանդով ծառայելու եկեղեցւոյ ու ազգին:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՅԴ Երիտասարդական միութիւններու հայրենի ճամբարները նպատակաուղղուած առաքելութիւն են

«Արի ու առնական կեցուածքով երիտասարդութիւն մը կը բախէ արդէն հայ կեանքի դոնեքը: Ան պէտք է արագօրէն հասուննայ եւ ինքզինք ամբօրէն շղթայէ իր ժողովուրդի անցեալին, կերտելու համար անոր փայլուն ապագան: Բարձր տեսլականի մը համար պայքարի դաշտ կը կանչէ ձեզ ՀՅ Դաշնակցութիւնը»:

Տոք. Բարգէն Փափազեան

ՀՅ Դաշնակցութեան աշխարհասփիւռ կառոյցի անքակտելի մասնիկն է ՀՅԴ Երիտասարդականը: Հայ երիտասարդութիւնը քաղաքականացնելու եւ Հայ Դատի լուծման գործընթացին մէջ նորահաս սերունդը ներգրաւելու յստակ մտադրութեամբ, 1929 թուականին գումարուած ՀՅԴ ԺԱ. Ընդհանուր ժողովը պաշտօնապէս առաջադրեց երիտասարդական եւ պատանեկան միութիւն ստեղծելու պահանջը, եւ այդ օրէն ի վեր, կուսակցութեան ընկերային-քաղաքական աշխարհընկալման առանցքային գաղափարներու դրօշակիրը դարձաւ Դաշնակցական երիտասարդութիւնը:

Վերջին տարիներուն, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Լիբանանի, Միացեալ Նահանգներու, Աւստրալիոյ, Ֆրանսայի, Գանատայի, Իրանի երիտասարդական եւ ուսանողական միութիւնները պատանեկան ճամբարներ կը կազմակերպեն Հայաստանի, Արցախի եւ Զաւախքի մէջ:

Ճամբարներու ծրագիրները կ'ընդգրկեն հայ ժողովուրդի յեղափոխական դէմքերու, հայրուկներու եւ դէպքերու ծանօթացում, Հայ Դատի այսօրուան եւ ապագայի մարտահրաւէրներու ներկայացում, Դաշնակցութեան պատմութեան ուսուցում, զրուցարան-ասուլիսներ, Արցախի ազատագրական պայքարի ժամանակադրութեան պատմութիւն, անգլերէն լեզուի եւ համակարգիչի դասընթացքներ, դաստիարակչական խաղեր, հայրենասիրական երգերու ուսուցում:

Նորահաս սերունդը ազգային գաղափարախօսութեամբ թրծելու առաքելութիւնը վեհ յանձնառութիւն է դաշնակցական երիտասարդին համար: Հայրենի հողին վրայ գործունէութիւն խարսխելու նախաձեռնութիւններով դաշնակցական երիտասարդութիւնը առիթը կ'ունենայ համաժողովուրդ պատմական հայրենիքին հետ եւ իր ներուժի լիարժէք օգտագործումով իր ներդրումը կը բերէ սերունդներու ազգային դաստիարակութեան կայացման գործին մէջ: Այս ճամբարները նոր մտահորիզոններ ու աշխարհայեացքներ կ'ընծեւեն նաեւ գործուղուած վարիչներուն, որոնք մասնակից դառնալով ճամբարային ծրագիրներուն՝ կ'ամրագրեն ոգեղէն կապը հայրենի հողին հետ:

ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան Վանաձորի ճամբարը իր 9-րդ տարին կը բոլորէ եւ իր գործունէութիւնը ընդլայնելով արդէն իսկ ծրագրին մէջ ներառած է Սպիտակ քաղաքը: 9 տարուան ընթացքին ՀՅԴ երիտասարդականի անդամ հարիւր պատասխանատու-վարիչներ գործուղուած են Լոռիի մարզ եւ նոյն այդ ժամանակահատուածին երկու հազար երեխաներ մասնակից դարձած են ՀՅԴ ԳԵՄ-ի ամառնային ճամբարի ծրագիրներուն:

Հազարաւոր հայ պատանանիններու դաստիարակչական եւ մարմնակրթական զարգացման ուղղուած այս ճամբարները պատճառ հանդիսացած են նաեւ, որ տասնեակ դաշնակցական երիտասարդներ հայրենադարձութեան որոշումը կայացնեն: Ի վերջոյ ՀՅԴ ծրագրային հանգանակին մէջ ամրագրուած տարագիր հայութեան աշխարհագրական միաւորման՝ ամբողջական Հայաստանի տարածքին համախմբման սկզբնակէտը հայրենադարձութիւնն է:

Դաշնակցական երիտասարդութիւնը հայրենի ճամբարներու իր ծրագիրներով անգամ մը եւս կը փաստէ, որ պատնէշի վրայ յանձնառու կը մնայ հայրենասիրութեան առաքելութեան:

Բարի երթ հայ ժողովուրդի երիտասարդ սերունդին:

Ghadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	Anto Keledjian Sales Representative Residential & Commercial Dir: (416) 930-2686 Bus: (416) 588-6777 570 Bloor St. W., Toronto, ON M5S 1K1 ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA	SUQ 2 Champagne Drive # B9 Toronto, ON M3J 2C5 Tel: (416) 661 8998 www.suqkitchen.ca
ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S. andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
Gary Chahinian President, Broker of Record Gabriel Chahinian Sales Representative 416-258-8892 647-580-5818 The Diamond Realty	I.D.A. Part of the <i>Alcan</i> family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian	ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

Գանատայի «Աթքէն Արմէնեան» Հիմնարկին ի նպաստ Մոնթրէալի մէջ ելոյթ ունեցան երկու տիտաններ՝ Ալին Գուրթան եւ Յասմիկ Պապեան

Համերգ, որ միայն համերգ չէ, այլ՝ հանդիսութիւն, որովհետեւ նախ պաստառի վրայ կը տեսնենք «Աթքէն Արմէնեան» Հիմնարկամբին անդամ Հայաստանի զանազան գիւղերէ տաղանդաւոր երախաներ: Կը տեսնենք Անահիտը, որ Փարիզի էյֆէլ աշտարակին մօտ ուրախ է, կիւմրեցի սրնգահար Մարիամը, որ կը դալլալէ իր գործիքով, երիտասարդ պատանի մը կ'երգէ, ջաւախցի Աննան, որ յաճախ կու գայ Երեւան՝ երգի կամ անգլերէն դասերու հետեւելու:

Բազմաթիւ օրինակներ եւս կը ցուցնեն «Աթքէն Արմէնեան» Հիմնարկամբին սաները: Հիմնարկամբ ունի երաժշտական գործիքներ, ունի նաեւ արհեստավարժ բացառիկ ուսուցիչներ, որոնցմէ նշենք աշխարհահռչակ սոփրանոսները՝ Ալին Գուրթանն ու Յասմիկ Պապեանը:

Նախ պարոք շրջանի երաժշտութիւն. Վիվալտի, Բերկովէզի, Հէնտը, երեքն ալ շրջանիս բարձրագոյն յօրինողներ, որուն կը յաջորդեն օփերայի եւ օփերէթի մեներգներ: Աշխարհիկ կեանք վարող Քամելիազարդ Տիկինը՝ Լա Դրավիաթան, երբ կը գտնէ իրական սէրը, խորհրդաւոր (միսթերիոզ) կը կոչէ, եւ տեսէք Ալինին դէմքը: Հետաքրքրական են Ալինին շարժումները, որքան զուսպ

այնքան արտայայտիչ: Յասմիկին լրջութիւնը, հագուստը, նախաքը հեռու. անոր կենսագրութիւնը կը կարդամ: Այս երգչուհին չորս ցամաքամասերու վրայ ոչ մէկ օփերայի բեմ ձգած է. Ի գուր չէ, որ իմ պիւճիքացի բարեկամներս իրենց գիւղէն, որ Ֆրանսայի սահմանին մօտ է, մինչեւ քաղաքի օփերայի սրահը կ'երթան, ժամեր կը տրամադրեն՝ ունկնդրելու համար հայագգի Յասմիկը: Իր անպաճոյճ եւ մանաւանդ ամենահրապուրիչ ձայնը կ'ընդլայնի թրթռացումներով, կ'ելլէ ու կ'իջնէ: Կը հարցնեմ.

– Մե՛ծն արուեստասէր երգչուհի, ինչպէ՞ս կ'ընէք, երբ կոկորդային ձայնը գլուխի ձայնին մէջ թաւշային կերպով կ'անցընէք:

– Մարզանքներով միայն: Երկրորդ մասը նուիրուած էր Կոմիտաս վարդապետի 150-ամեակին, որուն երգերէն կը հնչեն բոլորիս սրտին խօսող «Գարուն ա՛ն», «Քելէ, քելէ»ն եւ «Կռունկ»ը: Մեռնիմ ես այդ Կռունկին. անոր «Վայ լէ, լէ, լէ»ն գէթ ինծի համար աղօթք է, պանդուխտի ամենաքաղցրիկ ու ամենապարզ տողերով. այդքան յուզմունք չեմ զգացած ականատես ըլլալով Աթքէնին փոքրիկներուն... Հնչեցին նաեւ Կոտոյեանի, Միր-



զայեանի եւ Ալ. Յարութիւնեանի ստեղծագործութիւնները:

Ձեմ կրնար արագ անցնիլ Կանադեանի «Օրօր»ին վրայէն: Գութանի «Նաննիկ»ը աննման է, պզտիկը ձեռքը կ'օրօրէ:

Հանդիսութիւնը կ'աւարտի «Կլիկ-իա»ով, ներկաներուն արցունքոտ աչքերով եւ Կոմիտասի «Հայաստան»ով, զոր կը մեկնաբանէ Յասմիկ Պապեան եւ կ'արժանանայ հանդիսատեսներուն յոտնկայս ծափահարութեան:

Սրահը կը թնդայ, ներկաները տակաւին չեն յագեցած, կը խնդրեն շարունակել: Վերջապէս երգչուհիները մեզի կը հրամցնեն «Անուշ» օփերայէն «Ախ իմ բախտս», արուած ըլլալով որ Յովհաննէս Թումանեանի ալ 150-ամեակն էր:

«Օսքար Փիթրսըն» սրահի սոյն ելոյթը, 7 Յունիս 2019-ին անմոռաց պիտի մնայ հանդիսականներուն յիշողութեան մէջ, շնորհիւ հայագգի երկու մեծանուն երգչուհիներուն՝ Ալին Գուրթանի եւ Յասմիկ Պապեանի:

Ներկայ էին ՀՀ հիւպատոս Արա Մկրտչեան, Արմէնեան ընտանիքը, Քեյզգի նահանգային խորհրդարանի անդամ Քրիսթին Սէն փիեռ, Մոնթրէալի քաղաքապետարանի անդամ Արէֆ Սալէմ, ինչպէս նաեւ Դաշնակցային խորհրդարանի անդամ Եւա Նասիֆի գրասենեակի ներկայացուցիչ Վիգէն Տարաքճեան, Լաւալի քաղաքապետարանի անդամ Արամ Էլակէօզ եւ եկեղեցականներ:

Քրիստինէ Տրդատեան Գույումճեան

www.horizonweekly.ca

Նորիշը 40

ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հովանաւորութեամբ՝
ՀՀԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին

Կազմակերպութեամբ՝
«Հորիզոն»ի 40-ամեակի յանձնախումբին

Շաբաթ, 14 Սեպտեմբեր 2019-ին,
երեկոյեան ժամը 7:00-ին
Մոնթրէալի Հայ Կեդրոնի
«Ա. Ահարոնեան» սրահին մէջ
3401 Olivar Asselin, Montréal, Qc

Գեղարուեստական յայտագիր
Մուտքի նուէր՝ \$60.00

Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել
«Հորիզոն»ի գրասենեակ 514 332-3757 թիւին

ՀՅԴ Գանատայի շրջանի «Լոռի-Ջալախք» յանձնախումբի ջանքերով անցնող երկամեակին աւելի քան 100 հազար տղար հանգանակուած է ի նպաստ Լոռիի եւ Ջալախքի օժանդակութեան ծրագիրներուն



(Լուսանկարները՝ Մայք Թաշճեանի)

Ինչպէս միշտ, նաեւ Ուրբաթ, 14 Յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 9-ին մարդաշատ էին Գանատայի Հայ կեդրոնները: Առիթը ՀՅԴ Գանատայի շրջանի «Լոռի-Ջալախք» յանձնախումբին զեկուցական եւ հանգանակային հաւաքն էր՝ ի նպաստ Լոռիի եւ Ջալախքի օժանդակութեան ծրագիրներուն:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն հայրենիքի հիւսիսային հատուածի դարպասապահ շրջաններ հանդիսացող Լոռիի եւ Ջալախքի ռազմաքաղաքական կարեւորութիւնը նկատի ունենալով, իր «Լոռի-Ջալախք» յանձնախումբին միջոցով կ'իրագործէ օժանդակութեան տարբեր աշխատանքներ: Ինչպէս միջոցառման ընթացքին նշուեցաւ, այսօր համայն հայութեան ուշադրութիւնը աւելի շատ սեւեռած է հայ-ատուրպէյճանական սահմանին, եւ այնտեղ արձակուած իւրաքանչիւր կրակոց անմիջապէս կ'արձանագրուի աշխարհասփիւռ հայութեան հոգիին մէջ, սակայն այն չէ միակ վտանգուած սահմանը: Այսօր տարբեր մարտահրաւէրներու դիմաց են նաեւ Հայաստանի հիւսիսային տարածքները՝ հայոց աշխարհի երկու կարեւորագոյն հիմնասիւնները՝ Լոռիի եւ Ջալախքը, եւ այս շրջաններուն հզօրացումը Հայաստանի ու հայութեան հզօրացումն է, անոնց հզօրացումը կը ծառայէ նաեւ Արցախի, Արեւմտեան Հայաստանի եւ աշխարհի այլ վայրերու մէջ հայութեան բազուկի ամրապնդման:

Միջոցառման իր ելոյթի խօսքին մէջ յանձնախումբի անդամ Վիգէն Աբրահամեան չուզեց ծանրանալ աշխա-

տանքներուն կարեւորութեան վրայ, այլ նշեց. «Հայոց հիւսիսային պատուարի ամրութեան կարեւորութիւնը փաստաբանութեան կարիք չունի: Ան ամէն հայու խորին համոզումն է, եւ այդ համոզումն է մեր աշխատանքներուն յաջողութեան բանալին»: Զեկուցելով յանձնախումբին երկամեայ գործունէութեան մասին, ան ներկայացուց, որ փոքրիկ յանձնախումբով յաջողած ենք բաւական մեծ աշխատանքներ իրագործել, ի նպաստ Լոռիի եւ Ջալախքի օժանդակութեան ծրագիրներուն, եւ այդ ամէնը իրագործուած են խոնարհաբար, նուազագոյն աղմկարարութեամբ, առանց շեփորի եւ թմբուկի, ի տարբերութիւն համացանցը ողողած նախաձեռնութիւններու, որոնք շատ յաճախ աղմուկէն այն կողմ չեն անցնիր:

Աբրահամեան իր խօսքը աւարտեց՝ վստահութիւն յայտնելով մեր ժողովուրդին հանդէպ ու աւելցուց, թէ Լոռիի եւ Ջալախքի օժանդակութեան, ամրապնդման աշխատանքները դեռ պիտի շարունակուին նաեւ յաջորդ տարիներուն:

Միջոցառումը ունեցաւ նաեւ շատ յուզիչ եւ տպաւորիչ անակնկալ. Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի սաները, հայոց պատմութեան դասերէն սորվելով Լոռիի եւ Ջալախքի պատմութիւնը, տեղեկացած էին միջոցառման մասին եւ մեծ ցանկութիւն յայտնած՝ իրենց լուծման բերելու այս աշխատանքներուն: Անոնք ինքնաբոլոր նուիրահաւաք կազմակերպած էին ի նպաստ Լոռիի եւ Ջալախքի, նշանաբան ունենալով Չարենցի «Ո՛վ հայ ժողո-

վուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է» պատգամը: Աշակերտները փոխանցեցին, որ իրենք տունն ու դպրոցը սորված են «միշտ պատրաստ ըլլալ, երբ երբ մեր ժողովուրդը կանչէ մեզ, միշտ ըլլալ ժողովուրդին հետ, ժողովուրդին համար»: Անոնք շնորհակալութիւն յայտնեցին իրենց սիրելի ուսուցիչին՝ Մհեր Գարազաշեանին, որ ընդառաջեց էր աշակերտներուն ցանկութեան եւ օգնած՝ կազմակերպելու զայն: Աշակերտներուն հանգանակութեամբ գոյացած 6555 տոլարը փոխանցուեցաւ յանձնախումբին:

Աշակերտները միջոցառման յուզումը աւելցուցին նաեւ իրենց ասումներով:

Միջոցառումը իր աւարտիչ ելոյթով ամփոփեց ՀՅԴ Բիւրոյի անդամ Ռաֆֆի Տօնապետեանը, որ գնահատեց կատարուած աշխատանքները, նշելով որ այս տեսակ աշխատանքները կ'իրականանան ներշնչումով, հաւատքով եւ նաեւ պարտականութեան ու պատասխանատուութեան բարձր զգացումով: Ան շնչեց, որ ինչպէս յանուն Արցախի, նմանապէս եւ այս շրջաններու՝ հայ տոհմիկ ազնուականութեան՝ Մամիկոնեաններու, Զաքարեաններու, Բագրատունիներու երկրի, զարգացման համար իր առաւելագոյն ուժերը ներդրած է եւ կը ներդնէ ՀՅԴ Գանատայի կառոյցը՝ իր բոլոր ուղեկից միութիւններով: Կառոյցի ջանքերով վերանորոգուած եւ կահաւորուած են Ալաւերտի, Ստեփանաւանի, Վանաձորի կեդրոնները եւ Ախալքալաքի երիտասարդական կեդրոնը, նպատակ

ունենալով ստեղծել միջավայր, ուր հայ ժողովուրդին ամենակարեւոր հատուածը՝ երիտասարդութիւնը, հնարաւորութիւն ունենայ, հիմնուելով ազգային արժէքներու եւ հայեցի դաստիարակութեան վրայ, կազմակերպուել եւ իրենց նորարարական գաղափարներով ու ծրագիրներով ներգրաւուել երկրի զարգացման ու հզօրացման գործին: Ռաֆֆի Տօնապետեան կարեւոր նկատեց կառոյցին միջոցաւ Լոռիի մարզին եւ Ջալախքի մէջ ճամբարներու կազմակերպումը, որ հնարաւորութիւն կ'ընծայէ կապ հաստատելու սփիւռքի եւ հայրենիքի մէջ ապրող երիտասարդներուն միջեւ, առիթ, որպէսզի սփիւռքահայ երիտասարդները աւելի մօտէն ծանօթանան հայրենիքին: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներուն, ուղեկից միութիւններուն՝ ՀՕՄ-ին, ՀՄԸՄ-ին, երիտասարդական եւ Համազգայինի միութիւններուն, շեշտելով որ առանց անոնց օգնութեան եւ աջակցութեան այս հայրենանուէր աշխատանքները չէին իրագործուէր:

ՀՅԴ Գանատայի կառոյցի «Լոռի-Ջալախք» յանձնախումբին զեկուցական եւ հանգանակային միջոցառումը աւարտեցաւ յանձնախումբի ատենապետ Գաբրիէլ Սոմունճեանի խօսքով, որ յայտնեց, թէ յանձնախումբի երկամեայ գործունէութեան ընթացքին կատարած տարբեր միջոցառումներով հանգանակուած է 100,000 տոլարէն աւելի գումար, որմէ 22,000 տոլարը՝ սոյն ձեռնարկին ընթացքին:

Արմինէ Մուրչեան

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ
Դերձակութեան "Arthur Montreal"
հաստատութիւնը կարիքը ունի դերձակներու,
կարողներու եւ ձեւողներու: Հետաքրքրուողները
կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին:
Վարժանք արհեստի

TAILORS & SHIRT MAKERS NEEDED
"Arthur Montreal" Bespoke Tailors & Shirt Makers
are looking for experienced seamstress, cutters
and tailors. If interested, please call 514-843-0522.
Training will be provided.

Voyages
HAIG
Travel

Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Դաշնակցական Մամուլը

Ի՞նչ կը նշանակէ «մամուլ»

Բառացի՝ երկաթագործի յատուկ գործիք մըն է, որ կը ծառայէ առարկայ մը ամուր բռնելու, անշարժացնե–լու նպատակի։ Հին տարիներուն, մինչեւ 1960–70 թուականները հատիկ–հատիկ, քով–քովի կը շարուէին բառի մը գիրերը, եւ այդպէս կը կազմուէր էջը ափսէի մը վրայ, որ տպագրական մեքենայի մամուլին մէջ կ’ամրացուէր, որպէսզի գիրերը չտարտղնուին, եւ կը տպուէր թերթը, այսինքն մամուլէն լոյսին կու գար, լոյս կը տեսնէր թերթը։ Այս ձեւով է, որ «մամուլ» բա–ռը փոխաբերաբար ստացած է այսօրուան իմաստը եւ՝ ոչ միայն հայերէնի մէջ։

Հետագային, ձայնասփիւռի եւ հեռատեսիլի բազ–մացումով գործածական դարձաւ «գրաւոր կամ տպա–գիր մամուլ» բացատրութիւնը՝ զատորոշելու համար մէկը միւսներէն։

Սկզբնական չըջանին եւ երկար ժամանակի համար մամուլի ոգին եւ ուժը մտաւորականութիւնն էր։ Ան էր, որ հանրային կարծիք կը մշակէր եւ ուղղութիւն կու տար քաղաքացիներու քայլերուն։ Եւ փոխադարձաբար՝ հասարակութեան, ժողովրդային խաւերու տեսակէտնե–րուն, փափաքներուն, սպասումներուն կ’արձագանգէր, եւ ձեւով մը ան կը դառնար ժողովուրդի հայելին։

Մեծ է մամուլին դերը ժողովրդավարութեան տա–րածման, զարգացման ու ամրացման գործին մէջ։ Եւ, որքան որ ժողովրդավարութիւնը զարգացաւ, խօսքի ազատութիւնը անկապտելի իրաւունք դարձաւ, այն–քան աւելի մամուլին դերը եւ ուժը աւելցան այն աս–տիճան, որ քաղաքական գործիչներ, դեկավարներ կը յարգէին մամուլը, կ’ականածէին անկէ, նոյնիսկ կը վախ–նային մամուլէն։

Ճիշդ այս պատճառով ալ մամուլին տրուեցաւ 4–րդ իշխանութեան հանգամանք ժողովրդավարութեան մէջ՝ օրէնսդիր, գործադիր ու գատական իշխանութիւն–ներէն ետք։

Նոյն պատճառով ալ բռնապետներ երկրի իշխա–նութիւնը իրենց ձեռքին մէջ առնելէ, ժողովրդավարու–թիւնը ջնջելէ անմիջապէս ետք խիստ գրաքննութիւն կը հաստատեն մամուլին վրայ։ Ազատ մամուլը բռնա–պետներուն մեծագոյն թշնամին է։

Մամուլի ուժէն օգտուելիւ համար աշխուժացաւ դրամազուխը՝ capital–ը։ Դրամատէրեր հրատարակու–թիւններ գնեցին կամ ստեղծեցին, իրենց թերթ–պարբե–րաթերթերով ողողեցին հրապարակը, տէր դարձան ռատիօ–հեռատեսիլի կայաններու։ Անկարելի եղաւ դրամազուխին դէմ մրցիլ, եւ հանրային կարծիք մշա–կող մտաւորական լրագրողներ դարձան դրամատէրերու պաշտօնեայ եւ ենթակայ՝ անոնց հաշիւներուն, շահե–րուն□

Այսօր մամուլի ազդեցութիւնը մեծ համեմատու–թիւններու հասած է, բայց անկէ օգտուողը դրամազ–լուխն է, դրամատէրերն են։ Այդ ուժով է, որ ի գործ կը դրուի դիմագիծ ձեւաւորելու image maker հնարքը, որուն շնորհիւ ոեւէ քաղաքագէտ վեր կը բարձրացուի, կ’ազնուացուի, ժողովուրդին սիրելին–նախընտրելին կը դառնայ, կամ կը մրոտուի, պար կը զարնուի։

Պէտք է ըսել եւ ընդգծել, որ հայկական մամուլը եւ մանաւանդ դաշնակցական մամուլը սկիզբէն, առա–ջին օրէն մինչեւ այսօր եղա՝ծ է եւ է՝ գաղափարի ծա–ռայող, քաղաքական նպատակ հետապնդող, ազգի շա–հը պաշտպանող գործօն, որովհետեւ անոր տէրը դրա–մազուխը չէ եղած երբեք, այլ եղած է կուսակցու–թիւնը։ Աւելի՛ն. ան երբե՛ք ոչ միայն շահաբեր չէ եղած, այլեւ անոր բացը գոցելու, պիւտձէն հաւասարակշռելու համար կուսակցութեան պատասխանատու ժողովները յատուկ պիւտձէներ կը քուէարկեն՝ իրենց մամուլին անխափան հրատարակութիւնը ապահովելու համար։

Հպանցիկ ակնարկ՝ դաշնակցական մամուլին կարեւոր դերին մասին

Թուրք տիրապետութեան դէմ ասդին–անդին կռուող խումբերը միացնելու եւ «Դաշնակցութիւն» հիմնադրելու թէ՛ գաղափարը եւ թէ՛ կազմակերպու–թիւնը ծնունդ առաւ Թիֆլիսի մէջ, 1890–ին, ինչ որ ինքնին բարոյական մեծ նշանակութիւն ունի այն իմաստով, որ յեղափոխական մտաւորականներ, որոնք յարաբերաբար աւելի հանգիստ պայմաններու մէջ կ’ապրէին, կուսակցութիւն կը հիմնէին, կեանքերնին կը վտանգէին ոչ թէ իրենց հաշուոյն, այլեւ՝ թրքական տիրապետութեան տակ տառապող հայութեան սիրոյն։ Ասիկա աւելի վերջ սքանչելի կերպով պիտի բանաձեւ–ուէր Քրիստափորի յեղափոխաշունչ խօսքով, թէ՛ «Պատուէ է հարկաւոր աւազակապետներու գծած սահ–մաններով քարտէսները, որոնք աշխարհագրականօրէն մեզ իրարմէ կը բաժնեն»։

Դաշնակցութեան հիմնադիրները իրենց յեղափո–խական նպատակները տարածելու, ժողովրդականացնե–լու, հայութեան յեղափոխական ոգի ներարկելու համար

այդ օրերուն եւ հետագայ տարիներուն պիտի դիմէին ազգու երկու միջոցներու՝ մամուլին եւ կենդանի գոր–ծին։ Անոնք կը հաւատային, որ խօսքը, գաղափարը անարժէք են՝ առանց կենդանի գործի։ Որով, կուսակ–ցութիւնը հազիւ կազմաւորուած, արդէն հիմնադրուե–ցաւ «Դրօշակ» անունով պաշտօնաթերթը 1890–91–ին, Թիֆլիսի մէջ, ուր լոյս տեսաւ երկու թիւ՝ մայիսին եւ սեպտեմբերին, 3–րդ թիւը Ռուսմանիա, 1892–ին, որմէ ետք ժընեւ, մինչեւ 1914՝ Ա. Համաշխարհային պատե–րազմի սկիզբը։ Այս ժամանակաշրջանին «Դրօշակ»–ի շուրջ կազմուեցաւ նաեւ ՀՅԴ արեւմտեան Բիւրօ, 1898–ին, եւ որոշ ժամանակաշրջանի համար կուսակցութիւնը ունեցաւ երկու բիւրոներ։ Հոն պարբերաբար հրատա–րակուեցաւ նաեւ Ֆրանսերէն «Փրօ Արմենիա» անու–նով թերթ՝ օտարներ լուսաբանելու համար հայութեան պահանջներուն ու պայքարին մասին։ Տասնմէկ տար–ուան դադարէ ետք «Դրօշակ»ը վերահրատարակուեցաւ Փարիզ, 1925–1933։ Նորէն դադրեցաւ։ 1969–1985 Պէյրուժ, 1986–1999 Աթէնք, ապա՝ Երեւան։ Ներկայիս կը հրատարակուի տպագիր եւ ելեկտրոնային ձեւերով։ Խմբագիրներ եղած են՝ Քրիստափոր, Ռոստոմ, Յոնան Դաւթեան, Մ. Վարանդեան, Ս. Վրացեան, Ա. Զամալ–եան, Բաբգէն Փափազեան, Սարգիս Զէյթլեան, Նազա–րէթ Պէրպէրեան, Գէորգ Խուզինեան եւ ուրիշներ։

Պատկերացուցէ՛ք։ Առաջին տարիներուն եւ երկար ժամանակ դրամ՝ չկար, նեցուկ չկար, քաջալերանք չկար, ընդունելութիւն չկար։ Ընդհակառա՛կը, հարուստ հայերը, նաեւ՝ ոչ արհամարհելի թիւով եկեղեցականներ, որոնք ազդեցութիւն ունէին ժողովրդային խաւերուն վրայ, դէմ էին յեղափոխութեան գաղափարին, ուր մնաց, որ կողմ ըլլային յեղափոխական գործին։ Այնպէս որ, դաշնակցական մամուլը ապրեցաւ ու գործեց մտա–ւորական գործիչներու զոհաբերութեան ու ամբողջա–կան նուիրումին շնորհիւ։ Այս աւանդութիւնը կը շա–րունակուի մինչեւ հիմա, անշուշտ՝ բարելաւումով, քա–նի հայ կեանքն ալ բարելաւուած է։ Կ’արժէ ըսել սա–կայն, որ ներկայիս ալ դաշնակցական մամուլի ծառա–յողները կը ստանան սովորական վարձատրութիւն, իսկ մտաւորական յօդուածագիրները չեն վճարուիր։ Թե–րեւս բացառութիւններ ըլլան, բայց ընդհանրապէս կը գրեն անվճար։

Հակառակ դրամական միջոցներու չգոյութեան ու դաժան պայմաններուն՝ դաշնակցական մամուլի ցանցը արագօրէն ու յամառութեամբ տարածուեցաւ։ Գրեթէ ամէն վայր, ուր դաշնակցական գործիչներ կային, ու–նեցաւ իր մամուլը։ Կ’ենթադրեմ, որ անթերի ու ամբող–ջական ցանկ չկայ։ Գոնէ ես չեմ գիտեր։ Բայց պարզ գաղափար մը տալու համար նշեմ դաշնակցական ցան–ցին պատկանող կարգ մը թերթերու անուններ.

«Հորիզոն»՝ Թիֆլիս, 1906, հիմա՝ Մոնթրէյալ
Նշանաւոր եղաւ «Ազատամարտ»–ը՝ Պոլիս, 1909–10–էն մինչեւ 24 ապրիլ 1915, ապա հրատարակ–ուեցաւ «Արդարամարտ» անունով եւ յաջորդաբար՝ «Արիամարտ»։ Հետագային «Ազատամարտ»–ը հրա–տարակուեցաւ Փարիզ, ապա Հայաստանի վերանկախա–ցումով՝ Երեւան։ Ներկայիս՝ դադրած։

«Նոր Օր»՝ 1923–1940, ապա «Ազատ Օր»՝ 1945–էն ցայսօր, Աթէնք։

«Ազգակ»՝ Կ. Պոլիս, ապա » 1927–էն՝ Պէյրուժ։ Երկար տարիներէ ի վեր Պէյրուժի մէջ կը գործէ նաեւ ՀՅԴ–ի պատկանող ձայնասփիւռ։

«Ալիք »՝ Թիֆիս, 1906, ապա՝ Էրզրում, հետագա–յին եւ ցայժմ՝ Թեհրան, «Յառաջ»՝ Պոլիս, ապա՝ Փարիզ «Աշխատանք»՝ Թիֆլիս, 1910–1915 տարիներուն՝ Վան, ապա՝ Զմիւռնիա, «Հայաստանի Աշխատաւոր»՝ Երե–ւանի մէջ (1919–20), «Ապառաժ»՝ Արցախ, «Վէմ»՝ գի–տական–գաղափարաբանական պարբերաթերթ, Փարիզ, հիմա՝ Երեւան, նշանաւոր եղած է «Հայրենիք» ամսա–գիրը, Պոսթըն, (դադրած), «Հայրենիք» օրաթերթ՝ Պոս–թըն, ներկայիս՝ շաբաթաթերթ, «Ասպարէզ»՝ նախ Յրեզնօ, հիմա՝ Լոս Անճելըս, աւելի քան մէկ դարէ ի վեր, «Արմենիա» օրաթերթ՝ Արժանթին, հիմա՝ շաբա–թաթերթ, «Յուսաբեր»՝ Եգիպտոս, «Արեւելք»՝ Սուրիա (դադրած), «Երկիր»՝ Երեւան, հիմա՝ «Երկիր Մետիա», նաեւ՝ հեռատեսիլ։ Եւ, շա՛տ ուրիշներ։

Ի՞նչ եղաւ դաշնակցական մամուլին դերը

Ընդհանրապէս հայկական եւ յատկապէս դաշ–նակցական մամուլին դերը հնարաւոր ծաւալով ու տա–րողութեամբ կշռել կարենալու համար անհրաժեշտ է նախ մտաբերել, թէ անիկա ինչպիսի՞ միջավայրի մէջ կոչուած էր գործելու։

Հայրենաբնակ հայ հասարակութիւնը երկար դա–րեր օտարներէ տիրապետուած ըլլալով՝ կորսնցուցած էր իր ազգային գիտակցութիւնը, ազատ ապրելու կամքը եւ դարձած՝ ստրկամիտ։ Ընտելացած էր ան տիրապետող ազգերու արժեհամակարգին, նոյնիսկ՝ որդեգրած գայն։ Միայն եկեղեցին մնացած էր համախմբումի վայր, եւ

իբրեւ այդպիսին՝ մեծ ու նախախնամական եղաւ անոր դերը հայ կեանքի մէջ։ Բայց եկեղեցականներէն եւ հա–յոց ունեւոր դասէն քիչ չէին անոնք, որոնք կամայ–ակամայ դարձած էին գործակից՝ կեղեքող օտար տիրող–ներուն։

Ահա այն դաժան միջավայրը, որուն մէջ կոչուած էր գործելու դաշնակցական մամուլը՝ հոն տարածելու համար յեղափոխական շուենչ, յեղափոխական գաղա–փարներ ու ոգի։

1.– Դաշնակցական մամուլին առաջին մեծ ու շնորհապարտ գործը եղաւ համախմբել, քով–քովի բերել հայ մտաւորականները եւ անոնց մտքի թուիչքին տեղ բանալ։ Ատկէ ետք հայ կեանքի մէջ ամէն փոփոխու–թիւն, ամէն յաջողութիւն կարելի է վերագրել այս մեծ իրագործումին։ Այդ մտաւորականները այնքան շատ եղան, որ Ակնունին հեւտորական իր ոճով առիթով մը պոռթկաց, որ սա մտաւորականներու համախմբում չէ, այլ ազգն իսկ է□

2.– Պայքար եկեղեցականութեան, նոյնիսկ՝ կրօնի դէմ, որպէսզի արմատախիլ ըլլայ տիրացուի հոգեբա–նութիւնը, տիրապետէ ազատ մտածողութիւնը, իրա–ւունքի գիտակցութիւնը, սեփական ճակատագրի տէր ըլլալու կամքը, եւ ոչ թէ ամէն ինչ վերագրել Աստուծոյ կամքին, Աստուծոյ տնօրինումին, կեղեքողներու դէմ սպասել Աստուծոյ պատիժին եւ այլն…

3.– Ուրեմն դաշնակցական մամուլն ու կենդանի գործը հոգեփոխեցին հայութիւնը, պայքարի ոգի ներշնչեցին, ապագայի տեսիլք տուին անոր, որոնք ի վերջոյ յանգեցան Սարգարապատին, մայիս 28–ի ան–կախութեան, ազգային պետականութեան։

4.– Յեղասպանութենէն ետք գաղթական հայե–րուն կողմնացոյցը դարձաւ դաշնակցական մամուլը։

5.– Ճիշդ է, որ օրաթերթ ըսուածը ամէն օր կը ծնի եւ ծնած օրն իսկ կը մեռնի։ Բայց պահ մը մտածեցէ՛ք, որ գոնէ մինչեւ 1970–ական թուականները, երբ գիրերը քով–քովի կը շարուէին, որքան աչքի եւ մտածումի լոյս ու քրտինք թափուած են դժուար պայմաններու տակ, որպէսզի մտածումի լոյս տան հայ մարդոց եւ ազատու–թեան կամք ներշնչեն անոնց։

6.– Դաշնակցական մամուլը շա՛տ շատերու հա–մար դպրոց եղաւ։ Մեր նշանաւոր գրագէտներն ու բա–նաստեղծները հասուեցած են դաշնակցական մամուլի մէջ։

7.– Իրողութիւն է, որ յատկապէս երիտասարդ ու միջին տարիքի մարդիկ ընդհանրապէս թերթ չեն կար–դար ներկայիս։ Անոնց համար ամէն ինչի մասին իրա–գեկուելու աղբիւրը բլիթայինն է՝ «սելիւեր»։ Հաստա–տելով հանդերձ, որ կարդացողներ շատ չեն մնացած, դաշնակցական մարմիններ նիւթական ներդրումներ ընելով՝ կը յամառին թերթ հրատարակել, որպէսզի հայ–կական տունը ամէն օր հայ գիր տեսնէ եւ մեր «անկա–տար տենչեր»ը յիշէ։

Կ’ապրինք դարու մը մէջ, երբ արհեստագիտու–թեան գլխապտոյտ պատճառող գիւտերը յեղափոխած են ինչպէս այլ, նաե՛ւ հաղորդակցութեանց բնագաւա–ռը՝ միաժամանակ տկարացնելով ընդհանրապէս լրատ–ուական դաշտի ամէնէն ազդու նկատուած ձայնաս–փիւռի, նոյնիսկ հեռատեսիլի միջոցները եւ ամբողջու–թեամբ լուսանցքի անցուցած՝ «դասական»ը, այսինքն՝ տպագիր մամուլը։

Եզրակացութիւն

1) Այսօր, համաշխարհային մակարդակի վրայ մա–մուլը, այսինքն լրատուական դաշտը իր բոլոր դրսեւո–րումներով՝ տպագիր, ձայնասփիւռի, հեռատեսիլի թէ կայքէջի ձեւերուն մէջ, կը գտնուի դրամազուխին ձեռքը եւ կը ծառայէ անոր շահերուն։ Դաշնակցական մամուլը, շատ աւելի շեշտուած՝ յատկապէս սկզբնական տարիներուն, յենած էր մտաւորական գործիչներու զո–հաբերութեան եւ ամբողջական նուիրումին վրայ։ Ներ–կայի հայ կեանքի բարելաւ օրերուն իսկ, որքան որ հնարաւոր է, մամուլի աշխատաւոր գործիչներէն կը պահանջուի շարունակել «նուիրուածութեան» աւան–դութիւնը։ Անոնք կը ստանան սովորական վարձատ–րութիւն, իսկ յօդուածագիր մտաւորականներ չեն վար–ձատրուիր։

2) Կարելի է անվարան արձանագրել, որ գլխաւո–րաբար դաշնակցական մամուլին եւ Դաշնակցութեան կենդանի գործին շնորհիւ էր, որ թրքական ու ռուսա–կան կայսրութեանց տիրապետութեան տակ տառապող ու ստրկամիտ դարձած հայ ժողովուրդի երկու հատ–ուածները հիմնովին հոգեփոխուին։ Դաշնակցութեան գրաւոր խօսքն ու քարոզչութիւնը եւ կենդանի գործը հայութեան ներարկեցին ազգային գիտակցութիւն,

ՄԱՄՈՒԿ... Ծար. էջ 7

ՄԻՀՐԱՆ ՔԻՒՐՏՕՂԼԵԱՆ

Artsakh army launches large-scale military exercises

STEPANAKERT—The Artsakh Armed Forces on June 17 began large-scale four-day military exercises. The Artsakh Defence ministry reported that the drills were part of the Armed Forces 2019 training plan, and are aimed to advance and strengthen the combat readiness of the troops.

The Defence ministry announced that around 10,000 soldiers, more than 200 artillery systems, nearly 150 armoured vehicles, more than 50 air defence systems, more than 400 vehicles and other mobile systems will be deployed for the exercises, with the focus of the drill being the “completion of missions at night time.”

On June 18, the air defence forces of the Armenian Armed Forces took part in the exercises

with live fire with the involvement of Artsakh Defence Army air defence subdivisions. As the ministry of defence reported, the aim of the military exercise is to assess the level of combat-preparedness of the subdivisions, harmonize subdivisions during joint operations and enhance the efficiency of command and control systems, radar intelligence and surface-to-air missile complexes.

Modern air defence systems, including S-300, modernized S-125, Strela 10 surface-to-air missile system as well Igla-S man-portable air defence systems were involved in the exercises. Air defence subdivisions armed with modern home built radar stations are tested during the exercises.

Henrikh Mkhitaryan ties the knot

VENICE—It has been a busy month for the Captain of Armenia’s National Soccer team and midfielder for Arsenal Henrikh Mkhitaryan who on June 17 married Betty Vardanyan in a ceremony on San Lazzaro Island in Venice, Italy at the Mekhitarist Monastery.

Following the ceremony, the couple boarded a water taxi to their reception with three photographers onboard. Crowds lined the narrow streets and walkways to watch the soccer

star and his new wife.

Betty Vardanyan is the daughter of Armenian businessman and former parliament member Mikael Vardanyan, whose holdings include the popular Grand Candy.

According to the London-based Daily Mail, the couple has kept their relationship out of the limelight. They were engaged in November, and according to the newspaper, were first spotted in public in the summer of 2018.

ARF, Prosperous Armenia party leaders meet

YEREVAN—Leaders of the Armenian Revolutionary Federation and the opposition Prosperous Party of Armenia met on June 17 in what the ARF press office described as being part of the party’s ongoing dialogue with political forces in Armenia.

ARF Supreme Council of Armenia chairman Ishkhan Saghatelyan, Artsvik Minasyan and ARF Bureau member Arsen Hambartsumyan met with Prosperous Armenia Party chair-

man Gagik Tsarukyan, deputy speaker of the National Assembly Vahe Enfiajyan and lawmaker Gevorg Petrosyan.

A wide range of issues about Armenia’s domestic and foreign policy were discussed, with the sides becoming acquainted with one another’s position of issues.

The ARF Supreme Council of Armenia has and will continue such discussions. ARF leaders have also met with the Bright Armenia parliamentary faction, as well as other political forces.

ARF family loses two veteran activists

On June 12, two veteran leaders of the Armenian Revolutionary Federation passed away, leaving behind a legacy of activism and advocacy for the Armenian Cause.

The ARF Central Committee of Greece announced the passing of Hovsep Barazian, a long-time editor of the Athens-based Azat Or newspaper, the official publication of the ARF of Greece. In addition to his duties as editor, Barazian had also served as a member of the ARF Central Committee of Greece and worked as a fieldworker to advance the ARF’s activities in the various Armenian communities in Greece.

Long-time leader of the Armenian National Committee of Israel, Dr. Georgette Avakian, also passed away on Wednesday. For decades Avakian was at the forefront of advocating and advancing the issue of importance to the Armenian community in Israel, among them the recognition of the Armenian Genocide.

Our heartfelt condolences to the families, relatives of Barazian and Avakian, as well as the members of the communities in which they served. May they rest in peace.

ARF Bureau chairman meets with Cyprus president

NICOSIA—President Nicos Anastasiadis of Cyprus on June 13 welcomed a delegation to the presidential palace headed by Armenian Revolutionary Federation Bureau chairman Hagop Der Khachadourian, who was in Cyprus to attend events celebrating the anniversary of Armenian Independence.

President Anastasiadis told the ARF delegation that the Cypriot government stands in solidarity with the Republic of Armenia and the Armenian people in Armenia and the Diaspora. He stressed that the Cypriot government through its work in international organizations, such as the United Nations and European Union, will always work tirelessly in defending the interests of the Republic of Armenia and the rights of the people of Artsakh.

Anastasiatis confirmed that the Cypriot delegation at the European Parliament is already pushing for resolutions on issues related to Armenia and added that he has always enjoyed a positive working relationship with Armenia’s Ambassador to Cyprus.

Der Khachadourian thanked Anastasiatis for the particular attention his government pays to the Cypriot-Armenian community and assured him that the ARF, with its global organizational structure, is at the disposal of the Cypriot Administration to advance and assist in the just resolution of the Cypriot cause. He added that through the efforts Cyprus

member of parliament Vartkes Mahdessian, during the last several years, massive efforts have been undertaken to strengthen relations between the government and the Cypriot-Armenian community. Der Khachadourian expressed confidence that the lasting relations will continue to strengthen.

Der Khatchadourian told Anastasiatis that the ARF, through its Hai-Tahd committees around the world enjoys relations with the Cypriot embassies, consulates, and diplomatic representatives, all of which work tandem to advance the Cypriot and Armenian causes.

The chairman of the ARF Central Committee of Cyprus, Simon Aynedjian, briefed Anastasiatis about the number of meetings the ARF Bureau chairman has had with the newly-elected Cypriot Members of the European Parliament, assuring that the relations will also advance through the efforts of the European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD), in order to advance the interests of the Cypriots and Armenians.

At the conclusion of the meeting, which lasted half hour, mementoes were exchanged between the two leaders.

In addition to Mahdessian and Ayndejian, Der-Khachadourian was accompanied to the meeting by Vahan Aynedjian and Raffi Mahdesian. The Government Spokesman Prodromos Prodromu also attended the meeting.

Olympic gold medallist lights 2nd torch of Pan-Armenian Games

YEREVAN—A second torch for the upcoming Pan-Armenian Games was lit on June 16 at Khor Virap by Armenian Olympic gold medalist Artur Aleksanyan, who used the flame from St. Gregory the Illuminator church.

The first torch was lit last week during a ceremony held at the Holy Mother of God Armenian Church in Vakif, a village on the foothills of Mousa Ler in modern-day Turkey and what is historically part of the Armenian Kingdom of Cilicia.

A third torch will be lit at

Tigranakert in Artsakh and together with the other two will be headed to the Stepanakert National Sports Complex where the Pan-Armenian Games will kick off on August 5.

Members of the Pan-Armenian Games delegation that lit the first torch at Mousa Ler continued trek through historic Armenia by visiting Moush where they laid flowers on the grave of national liberation movement hero and Armenian Revolutionary Federation leader Kevork Chavoush.

The delegation was welcomed by Moush mayor Feyat

Asyan who said that the visit was very important. The chairman of the Pan-Armenian Games committee Ishkhan Zakaryan presented an overview of the games and also extended an official invitation to Mayor Asyan. He also presented a memento made by Armenian artisans.

On the road from the Moush Valley to Kars, the delegation stopped at the Souloukh bridge and threw roses in the Aradzani river in memory of Kevork Chavoush and his comrades in arms who were martyred in 1907 on that spot.

Zareh Sinanyan appointed High Commissioner of Diaspora Affairs

YEREVAN—Last week, Zareh Sinanyan was on the dais of the Glendale City Council voting on the city’s budget and on June 14 he was in Yerevan where he was appointed Armenia’s new High Commissioner of Diaspora Affairs by Prime Minister Nikol Pashinyan.

